Արձանագրություն N 5

«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ

02.12.2019թ.
ժ. 12:00

Մասնակցում են՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Յարմալոյան, Ա. Թումանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկող փաստաթղթերը:

Ներկայացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը և Անդրանիկ Ասլանյանի աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է ներկայացված փաստաթղթերը և դրանք գնահատել է բավարար:

Հիմք ընդունելով վերոգրյալը վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

1" «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին ճանաչել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող (ընտրված մասնակից):

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-19/13 ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 03"12.2019թ-ից մինչև 07.12.2019թ.:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Անգործության ժամկետը լրանալուց հետո «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին ծանուցել՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում և կնքել Սպիտակ համայնքի կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների մատուցման գնման պայմանագիր:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Ն. Յարմալոյան

_____ Ա. Թումանյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան